GLENDALE UNIFIED SCHOOL DISTRICT
223 North Jackson St., Glendale, California 91206-4380
Telephone: 818-241-3111, Ext. 1500 • Fax: 818-242-4213

Student Support Services
Dr. Ilin Magran

2017-2018

Բացակայության և ուշանալու վերաբերյալ տեղեկություններ ծնողների և աշակերտների համար

Ծնողը/խնամակալը, երեք օրվա ընթացքում, պետք է դպրոցին տեղեկացնի աշակերտի բացակայության մասին: Ծնողը/խնամակալը պետք է զանգահարի դպրոցի գրասենյակ և հայտնի բացակայության մասին: **Երեք օրվա ընթացքում չպարզեցված բացակայությունը ինքնաբերաբար դասից փախուստ (անհարգելի բացակայություն) է համարվում և այլևս հնարավոր չի լինի այն փոխել:**

Դասից փախուստ

Որևէ աշակերտ, որ պարտադիր պետք է դպրոց հաճախի, մեկ ուսումնական տարում, երեք օր անհարգելի բացակայություն ունենա կամ մեկ ուսումնական տարում, երեք անգամ, մեկ օրվա ընթացքում, ավելի քան 30 րոպե ուշացում կամ բացակայություն ունենա կամ դրանց որևէ մեկի համակցությունը, դասից փախուստ է համարվում և պետք է զեկուցվի հաճախումների վարիչին կամ կրթաշրջանի գերատեսչին:

Աստիճանական միջամտություն բացակայության (փախուստ) համար

3-րդ փախուստ Առաջին նամակը կուղարկվի ծնողին/խնամակալին ուշացման և բացակայության համար:

5-րդ փախուստ Երկրորդ նամակը կուղարկվի ծնողին/խնամակալին: Ըստ Կալիֆորնիայի կրթական կանոնադրության 48260 կետի, աշակերտը փախչում է դասից: Աշակերտը կհանձնարարվի SART-ի (Դպրոցական հաճախումները վերանայող անձնակազմ), որը ժողով կգումարվի դպրոցի վարիչի հետ ու կստորագրվի հաճախումների պայմանագիրը:

10-րդ փախուստ Երրորդ նամակը կուղարկվի ծնողին/խնամակալին: Ըստ Կալիֆորնիայի կրթական կանոնադրության 48260 կետի, աշակերտը փախչում է դասից: Աշակերտը կհանձնարարվի SARB-ին (Դպրոցական հաճախումները վերանայող հանձնախումբ):

Աստիճանական միջամտություն ուշացման համար

Ուշացման կանոն

Աշակերտը, դասի սկզբում, պետք է լինի իր նստարանին, աշխատավայրում կամ նշանակված վայրում (սահմանված ուսուցչի կողմից) և պատրաստ աշխատանք կատարելու համար, որպեսզի ներկա համարվի: Եթե աշակերտը 30 րոպե կամ ավելին ուշանում է դասից, երեք տարբեր դեպքերում, կհամարվի մի ամբողջ օր բացակայություն (օրինակ՝ 3 անգամ 30 րոպե կամ ավելին ուշացում = 1 օր բացակայություն): Բոլոր ուշացումների և բացակայությունների մասին, ծնողը/խնամակալը կտեղեկացվի Black Board Connect-ի միջոցով:

9-րդ ուշացում՝ Առաջին նամակը կուղարկվի ծնողին/խնամակալին ուշացման և բացակայության համար:

15-րդ ուշացում՝ Երկրորդ նամակը կուղարկվի ծնողին/խնամակալին: Ըստ Կալիֆորնիայի կրթական կանոնադրության 48260 կետի, աշակերտը փախչում է դասից: Աշակերտը կհանձնարարվի SART-ի (Դպրոցական հաճախումները վերանայող անձնակազմ), որը ժողով կգումարվի դպրոցի վարիչի հետ ու կստորագրվի հաճախումների պայմանագիրը

30-րդ ուշացում՝ Երրորդ նամակը կուղարկվի ծնողին/խնամակալին: Ըստ Կալիֆորնիայի կրթական կանոնադրության 48260 կետի, աշակերտը փախչում է դասից: Աշակերտը կհանձնարարվի SARB-ին (Դպրոցական հաճախումները վերանայող հանձնախումբ):

Սրբագրված՝ 08/17/2017